



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«24» 01 2019թ



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 05

Ձեռնարկողը՝

«ՍՎ ԶՈՒՐ» ՍՊԸ

Կոտայքի մարզ, Նոր Գեղի

Գործունեությունը՝

**Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի
թիվ 6/64 հորատանցքի արդյունահանման շրջակա
միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվեքվություն**

Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 05

<24> 01 2019թ.

**<<ՍՎ ՋՈՒՐ>> ՍՊԸ կողմից ներկայացված Կոտայքի մարզի Արզնիի
ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/64 հորատանցքի
արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվետվություն**

Ձեռնարկող՝
Փաստաթղթի տեսակը՝

<<ՍՎ ՋՈՒՐ>> ՍՊԸ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն, նախագծային
փաստաթղթեր /Ա կատեգորիա/
Կոտայքի մարզ, Արզնի համայնք

Գտնվելու վայրը՝

Կոտայքի մարզի Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է Հրազդան գետի կիրճում, ձախ ափին, <<Արզնի>> առողջարանի տարածքում: Հանքավայրի մոտակայքից անցնում է բարեկարգ, ասֆալտապատ Երևան-Սևան մայրուղին:

<<ՍՎ ՋՈՒՐ>> ՍՊ ընկերության կողմից նախատեսում է հանքավայրի թիվ 6/64 հորատանցքով հաշվարկված և հաստատված պաշարից 50 տարի ժամկետով իրականացնել հանքային ջրի արդյունահանում՝ արդյունաբերական (շաղկման) նպատակով:

Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/64 հորատանցքը գտնվում է Արզնի համայնքի վարչական սահմաններում, 1/62 հորատանցքից 24.0մ դեպի հյուսիս ուղղությամբ: Հորատանցքի բացարձակ բարձրությունը կազմում է 1280.0մ:

Հանքավայրի հանքային ջրերը կապված են Հրազդան գետի հին հովտի էֆֆուզիվ պլյովիալ կոմպլեքսի հետ: Հորատանցքի հանքային ջրի հիմնական արդյունաբերական միջակայքը, որը համապատասխանում է կոնդիցիայի պայմաններին, տեղակայված է 50.0-67.0մ խորության վրա, երկրաբանական կառուցվածքը ներկայացված է խարամով, հրաբխային ավազով, ճեղքավորված անդեզիտաբազալտներով:

Հանքավայրի հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի շահագործողական պաշարները 01.07.1966թ.-ի դրությամբ հաստատվել են 27.05.1967թ.-ին՝ նախկին ԽՍՀՄ Պաշարների Պետական Հանձնաժողովի (ՊՊՀ) կողմից (արձանագրություն թիվ 5164) և 01.01.2002թ.-ի դրությամբ, երեք հորատանցքերով վերահաստատվել են << օգտակար հանածոների պաշարների գործակալության (ՕՀՊԳ) կողմից 30.06.2003թ.-ին (արձանագրություն թիվ 12): Պաշարները կարող են օգտագործվել՝ շաղկման, բուժման և ազատ ածխաթթու գազի կորզման նպատակով: Հանքավայրի հանքային ջրի



շահագործողական պաշարները կազմում են 19.14 Վ/րկ կամ 1654.0 մ³/օր, իսկ ազատ ածխաթթու գազի պաշարները՝ 4.5 մ³/մ³ կամ 6.4 գ/լ, որից, 6/64 հորատանցքով հանքային ջրի պաշարն ըստ B կարգի կազմում է 7.02 Վ/րկ կամ 607.0 մ³/օր, իսկ ազատ ածխաթթու գազի պաշարներն ըստ B կարգի կազմում են՝ 0.3 գ/լ կամ 0.2 մ³/մ³: Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 0.5 Վ/րկ կամ 15768.0 մ³/տարի: Ներկայումս «Արզնի առողջարան» ՓԲԸ-ն հանքավայրի թիվ 6/64 հորատանցքից 0.23 Վ/րկ կամ 7250.3 մ³/տարի քանակությամբ հանքային ջրի արդյունահանումը իրականացնում է բուժական նպատակով: Բացի այդ, 0.15 Վ/րկ հանքային ջրը օգտագործվում է նաև ըմպելասրահում:


Արզնիի հանքային ջրերը ածխաթթվային են (CO₂-97.0-99.8%), թույլ թթվային (рН-6.4-6.6): Ըստ քիմիական կազմի ջրը քլորիդ-հիդրոկարբոնատային, նատրիումային է: Լուծված CO₂ գազի պարունակությունը կազմում է 1.6-1.8գ/լ, իսկ ազատ CO₂ գազինը՝ 0.2-0.4գ/լ: Թիվ 6/64 հորատանցքի ջրի ծախսը կազմում է 7.02 Վ/րկ, հանքայնացումը՝ 5.4-6.5գ/լ, ջերմաստիճանը՝ 16.4°C: Սպեցիֆիկ միկրոկոմպոնենտների չնչին քանակը չի գերազանցում թույլատրելի սահմանները: Հանքային ջրի մանրէաբանական կազմը բարվոք է և կարող է օգտագործվել շշալցման, բուժման և ազատ ածխաթթու գազի կորզման համար:

Համաձայն հաշվետվության հանքային ջրից ազատ ածխաթթու գազի կորզում չի նախատեսվում, քանի որ թիվ 6/64 հորատանցքում ազատ գազի պարունակությունը հանքային ջրում կազմում է ընդամենը 0.3 գրամ/լիտր: Հանքավայրում ազատ ածխաթթու գազի կորզման համար նախատեսված է թիվ 1/62 հորատանցքը, որում ազատ գազի պարունակությունը կազմում է՝ 5.1գ/լ:

Նախատեսվող գործունեության տարածքը «Արզնի առողջարան» ՓԲԸ-ից գտնվում է մոտ 100.0մ, իսկ ըմպելասրահից մոտ 80.0մ հեռավորությունների վրա: Հանքավայրի շահագործման ու շշալցման համար նոր օժանդակ շինությունների կառուցում չի նախատեսվում:

«ՍՎ ԶՈՒՐ» ՍՊ ընկերությունը հանքային ջրի շշալցման գործընթացը կիրականացնի «Արզնի առողջարան» ՓԲԸ հարակից տարածքում գտնվող կառույցում, որը օժանդակ շինությունների հետ միասին զբաղեցնում է 450մ² մակերես: Շշալցման արտադրամասն իր օժանդակ շինություններով առանձնացված է 3 մ բարձրություն ունեցող քարե պատնեշով և ապահովված է տեխնիկական ջրով:

Շշալցման գործընթացը կկազմակերպվի առողջարանի տարածքում, թիվ 6/64 հորատանցքից՝ հանքային ջրի ըմպելասրահ տանող 2 դույմանոց պոլիէթիլենային (խմելու որակի) խողովակաշարից, որտեղից ճյուղավորում կկատարվի դեպի հանքային ջրի շշալցման արտադրամաս և ըմպելասրահ: Հեռավորությունը ճյուղավորման տեղից մինչև շշալցման արտադրամաս կկազմի 70.0մ: Հանքային ջրի շշալցման արտադրամասում նախատեսվում է տեղադրել շշալցման մեկ հոսքագիծ (պլաստիկ տարաներում շշալցման համար), որի արտադրողականությունը 1.0 լիտր տարողությամբ շշի համար ժամում կկազմի 3000 հատ: Ընկերության շշալցման արտադրամասը հագեցած կլինի ժամանակակից տեխնոլոգիաներով և սարքավորումներով, որոնք ձեռք կբերվեն Չինաստանից և տեղում կտեղադրվեն:



Գործունեությունն իրականացնելու համար «Արզնի Առողջարան» ՓԲԸ-ի կողմից տրվել է նախնական համաձայնություն՝ ըմպելասրահ տանող հանքային ջրի խողովակից օգտվելու և շշալցման գործունեությունը կատարելու համար /գրություն թիվ 182 տրվ. 26.11.2018թ./:

Շահագործվող ջրիավաք հորատանցքը կահավորված է վերերկրյա կառույցով և հորատանցքի բերանի շուրջն իրականացվել է ֆունդամենտի հուսալի հիդրոիզոլյացիա՝ մակերևութային աղտոտված ջրերի մուտքը դեպի հորատանցք բացառելու նպատակով: Հորատանցքի շուրջ կառուցված է առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտի՝ հորատանցքի ելքը հնարավոր աղտոտումից պահպանելու համար:

Պայմանավորված աշխատանքների բնույթով և տեսակներով, հանքային ջրի արդյունահանման ժամանակ լանդշաֆտի ամբողջականության, հողային ռեսուրսների, կեսաբազմազանության և մթնոլորտային օդի վրա զգալի ազդեցություններ չեն կանխատեսվում:

«Օրենսդրությամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Արզնի համայնքում Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/64 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում իրականացվել են հանրային քննարկումներ /չորս քննարկում/: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության նախարարությունը և բնապահպանության նախարարության ստորաբաժանումները, որոնց կողմից ներկայացվել են առաջարկություններ և դիտողություններ:

Փորձաքննական հիմնավորումներ

Փորձաքննական գործընթացում ՇՄԱԳ հաշվետվությունը մի քանի անգամ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ պահանջներով ուղարկվել է լրամշակման և լրակազմման: Հաշվետվությունը պահանջվող նյութերով և հիմնավորումներով ամբողջովին չի լրամշակվել, և չեն ապահովվել Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 1)-ին, 2)-րդ, 3)-րդ, 4)-րդ, 5)-րդ, 7)-րդ 9)-րդ, 10)-րդ կետերի պահանջները:

1. Հաշվետվությանը կից ներկայացվող նախագծային փաստաթղթերը թերի են, չեն ներկայացվել շշալցման արտադրամասի նախագծային փաստաթղթերը:
2. Բացակայում է շշալցման արտադրամասի շահագործման, փակման փուլերի հետ կապված շրջակա միջավայրի գնահատումը:
3. Ներկայացված չէ 70մ երկարությամբ խողովակի տեղադրման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը:
4. Բացակայում է ջրահեռացման հետ կապված տեղեկատվությունը՝ տեխնիկական ջրի ընդհանուր ծախսի, մատակարարման աղբյուրի, ինչպես նաև արտադրամասից արտադրական հոսքաջրերի քանակի և հեռացման եղանակի վերաբերյալ:
5. Համաձայն հաշվետվության հանքային ջուրը վերցվում է 6/64 հորատանցքից, հսկ հանքավայրում ածխաթթու գազի կորզման համար նախատեսված է 1/62 հորատանցքը: Բացակայում է 1/62 հորատանցքից ածխաթթու գազի արդյունահանման նախագծային լուծումները և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը:



6. Շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը թերի է, բացակայում են 70մ երկարությամբ խողովակի տեղադրման և շալցման գործարանի կառուցման հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված միջոցառումները: Չեն ներկայացվել միջոցառումների իրականացման ժամանակացույցը, ծախսերի գումարային գնահատումները:

7. Հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների ու դրանց օգտագործման նկարագիրը թերի է, հաշվետվությունում ներկայացված է հիմնականում Կոտայքի մարզի շրջակա միջավայրի նկարագիրը:

8. Այլընտրանքային տարբերակների դիտարկումը ևս լրակազմ չէ, ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման (գրոյական) տարբերակը, ընտրված տարբերակի հիմնավորումը՝ շրջակա միջավայրի պահպանության, տնտեսական, սոցիալական տեսանկյունից:

10. Բացակայում է հանքավայրում գոյություն ունեցող հորատանցքերի և նախատեսվող գործունեության գումարային, ամբողջական ազդեցությունների գնահատումը:

11. Բացակայում է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումները:

13. «Վի Ընդ Էյ Տուր» ՍՊ ընկերության կողմից բնապահպանության նախարարություն ներկայացված գրության համաձայն, Արզնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի սանիտարական պահպանման գոտին՝ վարձակալական հիմունքներով, 24.06.2010 թվականից պատկանում է «Վի Ընդ Էյ Տուր» ՍՊ ընկերությանը: Բացակայում է «Վի Ընդ Էյ Տուր» ՍՊ ընկերության համաձայնությունը <<ՍՎ ԶՈՒՐ>> ՍՊ ընկերության կողմից նշված տարածքում գործունեության իրականացման վերաբերյալ:

ԵԶՐԱՎԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները՝ <<ՍՎ ԶՈՒՐ>> ՍՊԸ կողմից ներկայացված Կոտայքի մարզի Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/64 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է բացասական եզրակացություն:

Տնօրենի տեղակալ

Գլխ. մասնագետ



Ա. Դոնոյան

Հ. Մկրտչյան